ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» հոկտեմբերի 2025թ. N 174-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 31-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանի 1-ին հավելվածի 15-րդ կետը և որակավորման հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 23-ի N 61 արձանագրությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 7-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝ քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Շինարարության գեոդեզիական ապահովում» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 10 կրեդիտ:

2. Հաստատել «Շինարարության գեոդեզիական ապահովում» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10/13/2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2025 թվականի հոկտեմբերի 23 **-ի N** 174**-Ա հրամանի**

«Շինարարության գեոդեզիական ապահովում» միջոցառման ժամանակացույց

Հ/Հ	Ամսաթիվ	Ժամ	Թեմայի անվանում	Դասախոսի անուն և ազգանուն	Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը	Միջոցառման կրեդիտները	Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը	Մասնակցության վճարի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Նոյեմբերի 1-29 Շաբաթական 1 դաս, շաբաթ օրերին	14"30-16"30	«Շինարարության գեոդեզիական ապահովում»	Արման Յուրիկի Ավետիսյան, Դավիթ Գարիկի Հախվերդյան Դավիթ Խանաղյան Սոսիկի	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Ք.Երևան, Տերյան 105	10 կրեդիտ	1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի, 3-րդ արգի մասնագետ **04-06, 15-26, 31, 32** մասնագիտություններ	40.000 ՀՀ դրամ